Մակագրութիւնք

Ի յայտ. Կոնսիստորիային Աստրախանի. «Պատուիրեմք Կոնսիստ. Աստրախանի չընդունել զհրաժարական Գրիգոր քահանայի Իւզբաշեանց և կարգել այլ ևս զմին ի քահանայից տեղւոյն անդամ կառավարութեանն մինչ ցհաստատութիւն առաջնորդի», թ. 1216.

Ի խնդրագրի լիազօրաց հասարակութեան Ղուբա քաղաքի. «Պատուիրեմք Առաջնորդին Շամախւոյ կարճել զկենսաթոշակ Աւշարեանց քահանային ըստ համախօսական վճռոյ ժողովրդականաց Ղուբա քաղաքի, որով և վախճան դնել գործոյս», թ. 1236

Ի յայտ. Առաջնորդի թեմին Հայոց Վրաստանի. «Ձիջեալ Մեր ի հանգամանս գծագրեալս ի յայտարարութեան գործակալին, թոյլ տամք զպակ խօսեցելոյն ի վեցերորդում՝ աստիճանի ազգականութեան, պատուիրելով Առաջնորդին Հայոց Վրաստանի տնօրինել զարժանն», թ. 1265.

Ի յայտարարութեան լիազօրաց հոգաբարձութեան թեմ. դպրանոցին Շուշւոյ. «Ի նկատ առեալ Մեր զտնտեսական անձուկ վիճակ թեմական դպրանոցին Շուշւոյ, առաջադրեմք Սինոդին Ս. Էջմիածնի դարձուցանել զդրամս ըստ խնդրոյ լիազօրաց հոգաբարձութեանն», թ. 1318.

ՔԱՂՈՒԱՆՔ ՅՈՒՆԻՍԻՍԹԵԱՆՑ ՍԻՆՈԴԻ

Ի 13-ն յուլիսի Ըստ հրամանաց Սինոդին Ս. Էջմիածնի հաստատելով զեղրակացութիւն Կոնսիստորիային Շամախւոյ՝ պահանջել ի Մեսրոպ քահանայէ Տ. Ոսկանեանց 30 ռուբլիս յօգուտ որբոց և այրեաց. Տ. Տ. Յովհաննէս և Աբդալ քահանայից՝ առնել զխիստ յանդիմանութիւն», Հ. 610.

Ի նմին թուի Սինոդն հաստատելով զեղրակացութիւն Կոնսիստորիային Ղարաբաղի՝ նախ վաւերական համարել զպսակ Գրիգորի Սահակեան ընդ Գայանեայ Ռուստամեան ի 4-ում աստիճանի խնամութեան. երկրորդ՝ զգործակալն Յովհաննէս քահանայ Տ. Գրիգորեանց և զպսակակատարն զՏ. Խաչատուր քահանայ Տ. Գրիգորեանց դադարեցուցանել ի քահանայագործութենէ և առաքել յապաշխարութիւն. երրորդ՝ զԱրսէն Տ. Մեսրոպեան և զՌոստամն Սահակեան մատնել ի դատ քաղաքական իշխանութեան ի ձեռն պրոկուրորի վասն կեղծելոյ զատորագրութիւն յիշեալ երկուց քահանայից։ Հ. 616.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց Կոնսիստորիային Երևանայ հրաւիրել գծխական հոգաբարձուս, և զայժմեան երեսփոխան ս. Աստուածածնի եկեղեցւոյ Գեչռլու գեղջ, եթէ հնարաւոր իցէ, դատարանաւ ի ձեռս բերել մնացեալ մասն գոյից, կտակելոց ի Սեդրակայ Մելիք-Խաչատրեան յօգուտ այնր եկեղեցւոյն։ Հ. 618.

Ի նմին թուի Սինոդն թողլով զխնդիր Մկրտչի Տ. Անտոնեանց վասն անպահանջ թողլոյ զ70 ռուբլիս, զպարտիս հանգուցեալ հօրն առ այժմ առանց քննութեան՝ պատուիրել վանական Կառավարութեան կազմել յանձնաժողով վասն վերստին ստուգելոյ զհաշիւ նախկին հարկաժողովոյ հանգուցեալ Տ. Անտոնեանցի յընթացս ամբողջ ժամանակի հարկաժողովութեան նորա։ Հ. 619.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ նախ ունելով առաջի աչաց, զի ցուցեալ ի պաշտ. պրոկուրորի յօգուտածն օրինաց հայի միայն յաշխարհական ծառայողս և ոչ ի կուսակրօն միաբանս, ուստի զբողոքն թողուլ առանց հետևանաց. երկրորդ՝ ունելով ի նկատի, զի ի 50 ռ. ռոճկէ Խաչիկ վարդապետի $^1/_3$ մասն՝ այն է 16 ռ. 66 կ. բարձեալ լինի ըստ հրամանի Սինոդիս ի լրումն պարտուց նորա մասնաւոր անձանց, պատուիրել գանձապահի Սինոդիս Տ. Համազասպ վարդապետի բառնալ առ այժմ

ի միոյ յուլիսի տարւոյս մինչ ցլրումն այդոցիկ մասնաւոր պարտուց վարդապետին, զմնացեալ մասն ռոճկի նորա ի գումար 33 ռուբլի 34 կ. ի լրումն պարտուց նորա Մայր Աթոռոյ ի գումար 700 ռ. և մատուցանել Սինոդիս, տալով նմա միայն զ20 ռուբլիս սննդադրամս. իսկ ապա յետ լրման մասնաւոր պարտուցն բառնալ զամբողջ ռոճիկն Խաչիկ վարդապետի։ Եւ երրորդ՝ վասն վաճառելոյ Խաչիկ վարդապետի ինքնագլուխ զ20 խալուար ցորեան և ոչ մատուցանելոյ նորա զգոյացեալ դրամս ի Սինոդս յիւրում ժամու առնել նմա յԱտենի Սինոդիս զխիստ յանդիմանութիւն։ Հ. 617.

Ի 20-ն յուլիսի զտպագրեալ օրինակս կազմեալ ի Սինոդէս և հաստատեալ ի Վեհափառ Կաթուղիկոսէ ցուցակի ծախուց թեմ. Հոգևոր հաստատութեանց յղելով ի Կոնսիստորիայս Հայոց՝ պատուիրել նոցին տալ գործադրել զայն ի 1-ն սեպտեմբերի տարւոյս և մի առնել ի ցուցակի յաւելումն ինչ առանց թոյլտուութեան Սինոդիս։ Հ. 629.

Ի 25-ն յուլիսի Սինոդն հրամայեաց պատուիրել Տ. Մեսրոպ վարդապետի զ800 ռ. հանդերձ տոկոսեօք ընդ փոյթ յղել հոգ. կառավարութիւն Ն. Նախիջևանի ի յանձնել հեռագրեալ ծխական հոգաբարձութեան Առինջ գեղջ ի ծախսել ի պէտս դպրոցի և երկրորդ՝ զխնդիր Տ. Մեսրոպ վարդապետի վասն արկանելոյ զՏ. Լևոն վարդապետն ընդ պատասխանատուութեամբ յաղագս ցանկալոյ արտաւորել զանուն նորա, թողուլ առանց հետևանաց ի պատճառ անհիմն գոլոյ խնդրոյն։ Հ. 636.

Ի նմին թուի Սինոդն հրամայեաց նախ՝ առնելով առաջի աչաց զծերութիւն և զհիւանդագին վիճակ Բարսեղ աւագ քահանայի Խաչատրեան և զայն, զի նա արդէն վճարեալ է զհասանելի ինքեան մասն ի վատնեալ դրամոյն, ուստի ի փոփոխումն նախկին վճռոյ սորին պատուիրել Կոնսիստ. Նոր–Նախիջևանի և Բեսսարաբիոյ արք-

կանել զԲարսեղ աւագ քահանայն ընդ մի ամսեայ եկեղեցական ապաշխարանաց ի խորանի եկեղեցւոյ Փիշնևի, յետ որոյ թոյլ տալ նմա առնել քահանայագործութիւն։ Երկրորդ՝ առեալ ի նկատի, զի Սարգիս քահանայն Թաթարիզեան ոչ հայեցեալ ի կրկնակի հրամանս նորին ոչ գնայ ի տեղի ապաշխարանացն և ոչ հատուցանէ զմասն իւր ի վանեալ գրամոցն՝ ուստի պատուիրել Կոնսիստորիային ի ձեռն ոստիկանական իշխանութեան, զհովուութիւն ծխոց նորա յանձնել այլում քահանայի ըստ հայեցողութեան թեմական իշխանութեան այնու, զի հովուողն զմի երրորդ մասն յարդեանց ծխոց յանձնեացէ, ի ձեռն Կոնսիստորիային, ընտանեաց արգելեալ քահանային, զմիւս երրորդ մասն առցէ ինքեան, իսկ զվերջին երրորդ մասն մատուցցէ ի Կոնսիստորիայն, վասն յղելոյ ի Սինոդս, ի լրումն պարտուց Սարգիս քահանայի, որ մնալոց է ի տեղւոջ ապաշխարանացն մինչ ցլրումն ողջոյն պարտուց։ Երրորդ՝ զմիւս Սինոդիս վասն ընդ միչտ զրկելոյ զվերոյիշեալ երկուս քահանայս և զարձակեալ ատենադպիր Կարապետ Օհանջանեանց ի պաշտօնավարութենէ ի հոգևոր հաստատութիւնս Հայոց թողուլ ի զօրութեան։ Եւ չորրորդ՝ ունելով առաջի աչաց, զի վանումն գրամոց ի Կոնսիստորիային յառաջացեալ է յանփութութենէ Ատենապետի նորին, որ ըստ օրինի է գլխաւոր պատասխանատու վասն ամենայն անկարգութեանց և թերութեանց Ատենի՝ ուստի Առաջնորդի թեմին Տ. Ներսէս Արքեպիսկոպոսի առնել զխիստ յանդիմանութիւն, ի զգուշութիւն յապագայի և ի խրատ այլոց։ Հ. 638.

Ի 1-ն օգոստոսի Սինոդն յղելով զչքանչանն և զվկայականս Մատնիչեանց աւագ քահանայի ի Կոնսիստորիային Երևանայ, զչքանչանս և զվկայականս Տ. Յովսէփեան և Արշեան քահանայից՝ ի Կոնսիստ. Վրաստանի և զԲաբայեան Զաւէն վարդապետին՝ ի Կոնսիստ. Շամախւոյ, պատուիրել թեմ. ատենից յանձնել զայնս ըստ պատկանելոյն։ Հ, 446.

Ի 6-ն օգոստ. Սինոդն թողլով զնախկին վճիռ ի 16 մարտի տարւոյ, մերժել զխնդիր Տ. Մատթէոս վարդապետի վասն ապառիկ ռոճկաց նորա յաղագս հոկտ. նոյեմբ. և դեկտեմբեր ամսոց անցեալ ամի։ Հ. 655.

Ի նմին թուի Սինոդն անհիմն համարելով զխնդիր, որ վասն վերստին քննելոյ զգործ զեղծման ցորենոյ, Տ. Խաչիկ վարդապետի, թողուլ զայն առանց հետևանաց։ Հ. 656.

Ամուսնալուծութիւնք

Սինոդն հաստատելով զեզրակացութիւն Կոնսիստ. Երևանայ՝ լուծանել զպսակ Նազոյի Փռէեանց ընդ Սանոփի Յարութիւնեանց. միայն կնոջն տալ իրաւունս կրկին ամուսնութեան։ Հ. 648.

Սինոդն ի նկատի առեալ զ7 ամեայ անջատ կեցութիւն բնակչի Գոմեր գեղջ՝ Միքայելի Աստուածատրեանց և զլքանել զօրինաւոր կինն իւր զՍիրանոյշ Մամիկոնեան. լուծեալ համարի պսակ նոցին. կնոջն և եթ իրաւունք են մտանել ի նոր ամուսնութիւն։ Հ. 647.

Սինոդն հաստատելով զեզրակացութիւն Կոնսիստ. Երևանայ, որ վասն մերժելոյ զխնդիր Յովհաննու Եսայեանց յաղագս լուծման պսակի նորա ընդ Աշխենի Մուրադեան ի պատճառս անհիմն գոլոյ խնդրոյն, կարճէ զայս գործ։ Հ. 653.

Սինոդն լուծեալ համարի պսակ Լևոնի Բերբերեան ընդ կնոջն Զաքելի՝ տալով իրաւունս երկոցունցն և մտանել ի նոր ամուսնութիւն։ Հ. 661.

Կոնդակ յանուն Կոնսիստորիային Հայոց Վրաստանի, որով լուծեցաւ պսակ տաճկահպատակ Մատթէոսի Տնտեսեանց ընդ կնոջն Եղիսաբեթի Կարապետեան և թոյլ տուաւ վերջնոյս մտանել ի նոր ամուսնութիւն։ Թ. 1349.

Մակագրութիւն ի խնդրագրի Սէրգէյի Դօնմազեանց. «Զիջեալ ի թախանձանս երիտասարդ աղերսարկուիս, պատուիրեմք Կոնսիստորիային Հայոց Վրաստանի թոյլ տալ Սէրգէյի Դօնմազեանց մտանել ի նոր ամուսնութիւն»։ թ. 1199.

Մակագրութիւն ի խնդրագրի Կարապետի Ալաճալեանց. «ի նկատ առեալ Մեր զհէգ վիճակ զաւակաց խնդրարկու Կարապետի Ալաճալեանց և շատ համարելով զապաշխարանս նորա, պատուիրեմք Կոնսիստորիային Աստրախանայ թոյլ տալ սմա մտանել ի նոր ամուսնութիւն»։ թ. 1204.

Մակագր. ի խնդրագրի Ստեփանոսի Այվազեանց. «ի նկատ առեալ Մեր զընտանեկան հանգամանս և զիջեալ ի թախանձանս խնդրարկուիս, պատուիրեմք Կոնսիստորիային Հայոց Վրաստանի թոյլ տալ սմա մտանել ի նոր ամուսնութիւն»։ թ. 1299.

Մակագր. ի խնդրագրի Սահակայ Թարվերդեան. «Շատ համարելով Մեր զեռամեայ ապաշխարանս և զրկանս, պատուիրեմք Կոնսիստորիային Երևանայ թոյլ տալ խնդրարկուիս մտանել ի նոր ամուսնութիւն»։

Հրաման Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալին Ամենայն Ռուսաց ի Լուսաւորչական Հայոց Սինոդէ Սրբոյ Էջմիածնի Խմբագրի «Արարատ» ամսագրոյ.

№ 1689

Ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան ի Սինոդիս լուան զկոնդակ Վեհափառ Կաթուղիկոսի ի 23 *յուլիսի անցելոյ թ.* 1229, *որով ծանուցանէ Սինոդիս, թէ ընկալեալ է յայտարար խնդրագիր ի միաբանէ Մայր-Աթոռոյ ի Թովմա վարդապետէ Բաղդասարեան, որով սա խնդրէ ազատ համարել զինքն յանդամութենէ միաբանու-*

թեան վանուցս և դասել ընդ հարկատուս, յաւելլով թէ որոշումն իւր անդառնալի է։ Ուստի Նորին Սրբութիւնն բարձեալ համարի ի նմանէ զհոգևոր կոչումն և ազատ՝ ի միաբանութենէ և պատուիրէ Սինոդիս տնօրինել դասել զնա ընդ հարկատուս։ Հրամայեցին. նախ՝ զԹովմա վարդապետն Բաղդասարեան ազատ համարել յանդամութենէ միաբանութեան վանուց Ս. Էջմիածնի և բառնալով ի նմանէ զկարգն վարդապետական՝ դասել զնա ընդ սոսկ աշխարհականս, համաձայն խնդրանաց նորա, զորմէ ծանուցանել Նահանգապետին Երևանայ և խնդրատուին ի ձեռն Կոնսիստորիային Աստրախանի, պատուիրելով վերջնոյս պահանջել ի Բաղդասարեանցէ զվարդապետական խաչն և զվկայական հոգևոր կոչման և վարդապետական կարգի նորա և առաքել զայնս ի Սինոդս, և երկրորդ՝ զգործ որ վասն պահանջելոյ ի Բաղդասարեանցէ զհաշիւ դրամոց և իրեղինաց, ընդունելոց նորա ի բաշխել կարօտեալ հայ ժողովրդեան վիճակին Հին–Նախիջևանի, ի գումար երեսուն և մի հազար ռուբլեաց, կարճել ի Սինոդիս, զոր և ծանուցանել Կենդրոնական Նպաստամատոյց Ցանձնաժողովոյն Տփխեաց։ Զայս վճիռ տալ տպագրել ի պաշտօնական «Արարատ» ամսագրի։ Ի 20 օգոստոսի 1907 ամի ի Ս. Էջմիածին։

Անդամ Սինոդի **Բարգէն վարդապետ.**

Կ. պ. Ատենադպրի Ե. Մուշեղեան.

Ի ս. Գործավարի Ա. Հայկազունի.